

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵՂՆ

1995 թ. Թեհրան

Մասն Առաջին - ՆԱԽԱԲԱՆ

- 1- Միութեան անունն է Հայ Համալսարանականների
Ընդհանուր Միություն, հիմնել է 1943 թականի
դեկտեմբերի 10-ին, անժամկետ ժամանակով, մասնաւոր
անդամակցական հիմունքով, եւ իր գործունեութիւնն
անընդմեջ շարունակում է մինչեւ այսօր, կառույցային
նոյն դրւածքով:
- 2- Միութիւնը բաղկացած է համալսարանական,
ուսանող եւ շրջանաւարտ անդամներից:
- 3- Միութիւնը շահադիսական հաստատութիւն չէ եւ իր
հասոյթն ամբողջութեամբ յատկացնում է իր հեճապնդած
նպասակների իրականացման գործին:
- 4- Միութիւնը փառաբանական կազմակերպութիւն չէ եւ չի
պատկանում փառաբանական որեւէ խմբակցութեան:
- 5- Միութեան կենտրոնը գտնւում է Թեհրանում, եւ հարկ
եղած պարագային կարելի է մասնաճիւղեր հաստատել
այլ վայրերում:

Մասն Երկրորդ - ՆՊԱՏԱԿ

Միութիւնը, որը հիմնականում կենսի տր կոչել իրանահայ հասնող սերունդների հայեցի կրթութանն ու ազգային դաստիարակութանը նպաստելու, նրանց մեզ քարոզագոյն ուսման փափագը խրախուսելու եւ հունաւորելու,

հանրութան բժշկա-առողգագիտական կարիքներին գոհացում տալու եւ համահայկական նպատակների կենսագործմանը սասար կանգնելու առաքելութեամբ, այսօր, իր գործունեութան երկրորդ յիսնամեայ շրգանի մեզ, իր ծաւալուն կազմով ու ընդարչակեւծ կարելիութիւններով, իր միւնչայծմեայ գործունեութան կողքին, դեմ-յանդիման է կանգնեւծ, իրենց տութեամբ ու բովանդակութեամբ, նոր ու սարբեր մի շարք իրագործումների, որոնց առագադրեւծ պահանգներից ելնելով հեւամուս է իրականացնելու հեւեւեւալ նպատակները:

- Օծանդակել Իրան-Հայաստան գիտամշակութային համագործակցութիւնների ընդարչակմանը, բարեկամական յարաբերութիւնների ամրապնդմանը եւ իրանագիտական ու հայագիտական աշխատանքների քարգաւաքմանը:

- Չարկ տալ միութեան անդամ-ուիիների մասնագիտական սպասարկութիւններից հանրային

կարիքներին եւս քաժին հանելու եւ գոհապում սալու գործընթացին:

- Միութեան՝ «Մենք սովորեցնելով ենք սովորում» նշանաբանով առաջնորդելով, ըստ ամենայնի վարկ սալ միութեան եւ Իրանի միգրակարգ դպրոցների հայ աշակերտութեան կապերի ընդարձակմանն ու սերտացմանը եւ այդ չամբով գործնականապէս խրախուսել եւ օժանդակել Լրանյ՝ բարձրագոյն մասնագիտական կրթութիւն ստանալու կարելոր նպասակի իրագործումին:

- Չարկ սալ Իրանի եւ արտասահմանի մեզ գործող նոյնանպասակ միութիւնների ու գիտա-մշակութային կենտրոնների հետ կապեր ստեղծելու եւ արդիւնաւէտ համագործակցութիւններ հաստատելու աշխատանքներին:

Մասն Երրորդ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

Կապմակերպչական Գլուխ Ա Անդամակցություն

Յօդված 1.

Միությունն անդամակցում են որեւէ համալսարանի եւ բարձրագոյն դպրոցի այն հայ ուսանողներն ու շրջանաւարտները որոնք կընդունեն միության ծրագիր-կանոնագիրը, կը ներկայայեն գրաւոր դիմում միության երկու անդամների երաշխաւորութեամբ, եւ որոնց դիմումները կը հաստատեն միության վարչութեան կողմից:

Ծանօթ ա. Բարձրագոյն դպրոցներ համարում են կրթական այն հաստատութիւնները, որոնց կողմից տրւած վկայականները, Իրանի պետական չափանիշով, կը համարեն առնուազն լիսնաս կամ լիսանսին համարժէ:

բ. Ելնելով միութեանս նպատակի բաժնում արծարծւած ոգույ՝ սեղիս Հայերէնագիտական դասընթացների ուսանողներն ու շրջանաւարտները, որոնց ուսման ծրագիրը հաստատւում եւ հովանաւորւում է Թեհրանի հայոց Թեմական խորհրդի կողմից, քայտաքար, անկախ յօդված 1-ի

սրամադրութիւնից, կարող են ընդունել որպէս միութեան անդամ:

գ. Դիմումնագիր ներկայայնողներին կարող են երաշխաւորել այն անդամները որոնք առնուազն մէկ տարւայ միութեանական անցեալ ունեն:

Յօդւած 2.

Միութեան այն անդամները, որոնք անդամակցութիւնը ընդհատել է, կարող են իրենց անդամակցութիւնը վերականգնել՝ նոր դիմումնագիր ներկայայնելով:

Յօդւած 3.

Միութեան անդամ այն ուսանողները որոնք լիսանսի շրջանում չեն շարունակում իրենց համալսարանական դասընթացները, կը պրկւեն միութեան անդամակցութիւնից:

Ծանօթ Ա. Միութեան ուսանող անդամները, ամէն ուսումնական տարեշրջանի սկզբին, պարտաւոր են գրասենեակին ներկայայնել իրենց ընթացիկ տարւայ ուսանողական փաստագիրը:

Յօդւած 4.

Վարչութեան որոշմամբ միութեան պատուոյ անդամներ կարող են համարուել այն անհատները, որոնք միութեանը բերած կը լինեն լայն ազակցութիւն եւ կամ կը

ներկայայնեն գիսական ու մշակութային արժեքավոր հնդիակություն:

Յօդած 5.

Միութեան անդամավարների սակը չշոմ է Ընդհանուր ժողովը: Միութեան բոլոր անդամները, քայառութեամբ Պասոյ անդամների, պարսաւոր են վարել անդամավար՝ Ընդհանուր ժողովի կողմից որոշած սակի համաշայն:

Յօդած 6.

Միութեան Ընդհանուր ժողովի կողմից որոշած անդամակցութեան վարը չկասարող անդամը ինքնաքերաքար կը կրկի Ընդհանուր ժողովներին մասնակցելու իրաւունքից:

Ծանօթ ա. Իւրաքանչիւր նոր անդամակցող միութեանական իր անդամակցութեան հաստատման թականից կասարում է անդամակցութեան վարը մինչեւ ընթացիկ սարեշրգանի աւարտը:

բ. Բոլոր անդամները պտք է ամեն սարւայ սկզբին յունարի ամսից կասարեն իրենց անդամակցութեան միամեայ վարը:

գ. Վարչութիւնը պարսաւոր է երեք ամիս նախքան սարեվերգ, գրաւոր յիշեցում կասարել այդ սարւայ անդամակցութեան վարը չկասարած անդամին, ետամետայ

ժամկետ սահմանելով նրա համար: Յիշեալ ժամկետից յետոյ թերապող միութենականը, վարչութեան որոշումով, կը դադարի միութեան անդամ լինելուց:

Գլուխ Բ Կառոյց

Յօդուած 7.

Միութեան կառուցային դրւածքը բաղկացած է հետեւեալ ժողովներից ու մարմիններից.

- ա. Ընդհանուր ժողովներ
- բ. Վարչութիւն
- գ. Զննիչ մարմին

Յօդուած 8.

Միութեան Ընդհանուր ժողովներն են.

- ա. Տարեկան Ընդհանուր ժողով
- բ. Արտակարգ Ընդհանուր ժողով

Ա. Տարեկան Ընդհանուր ժողով

Յօդուած 9.

Միութեան տարեկան Ընդհանուր ժողովը գումարւում է վարչութեան հրաւերով, իւրաքանչիւր տարւայ սեպտեմբեր ամսուայ ընթացիւմ:

Ծանօթ ա. Այնպէս ինչպէս ղեկավարութիւնների պատշաճօրով եւ Զննիչ մարմնի հետ համախոհութեամբ, վարչութիւնը կարող է

յեսաձգել Ընդհանուր ժողովը, իր այս որոշման համար միշտ պասասխանատու մնալով Ընդհանուր ժողովին:

Յօդուած 10.

Միութեան անդամների մէկ երրորդի գրաւոր պահանգի հիման վրայ, վարչութիւնը Ընդհանուր ժողով կը հրաւիրի պահանգագիրը ստանալու թականի պատուիրակները մինչեւ մէկ ամիս: Միութեան անդամների կողմից սոյն կանոնագրութեան սահմանների մէջ հրաւիրուած Ընդհանուր ժողովը կարող է զբաղւել միայն այն հարցերով, որոնք հիմք են ծառայել ժողովի գումարման համար:

Յօդուած 11.

Տարեկան Ընդհանուր ժողովները վաւերական են համարուում երբ ներկայ է միութեան վճռական չայն ունեցող (ֆէարկու) անդամների պարզ մեծամասնութիւնը (կէս գումարած մէկ): Յիշեալ մեծամասնութիւնը չկայանալու դէպքում, երկու շաբաթ յետոյ վերստին հրաւիրուում է նոյն ժողովը, որը վաւերական կը համարուի անկախ վճռական չայն ունեցող ներկայ անդամների թւից:

Յօդուած 12.

Տարեկան Ընդհանուր ժողովներում բոլոր որոշումները վաւերական են համարուում ֆէարկու ներկաների կէսից մէկ անելի չայնով, ի քայ առեալ այն պարագաները որոնք նախատեսուած են այս կանոնագրով:

Յօդված 13.

Տարեկան Ընդհանուր ժողովի իրաւասութիւններն են.

ա. Քննել եւ հաստատել վարչութեան միամտայ ամբողջական գործունեութեան ղեկուկադիրը:

բ. Քննել եւ հաստատել Քննիչ մարմնի միամտայ գործունեութեան ղեկուկադիրը:

գ. Քննել եւ հաստատել միութեան աշխատանքների ուղեգիծը եւ որոշումներ կայայցել միութեան բոլոր խնդիրների եւ աշխատանքների համար, քայառութեամբ այն խնդիրների որոնք մտնում են արտակարգ Ընդհանուր ժողովի իրաւասութեան մեզ:

դ. Քննել եւ հաստատել միութեան միամտայ նախահաշիւը:

ե. Ընտրել վարչութիւն՝ յօդված 34-ի համաչայն:

զ. Ընտրել Քննիչ մարմին յօդված 41-ի համաչայն:

Բ. Արտակարգ Ընդհանուր ժողով

Յօդված 14.

Արտակարգ Ընդհանուր ժողովները իրաւիրում են միութեան վարչութեան կամ Քննիչ մարմնի կողմից, հարկ եղած պարագային:

Օտտօր ա. Միութեան քեարկու անդամների մեկ տասներորդի գրաւոր դիմումի հիման վրայ, վարչութիւնը գումարում է Արտակարգ Ընդհանուր ժողով, դիմումն ստանալու թաւկանիկ միւնէտ 20 օր:

Սոյն Ընդհանուր ժողովը կարող է պրազել միայն այն օրակարգով, որ հիմք է ծառայել ժողովի գումարման համար:

Յօդւած 15.

Արտակարգ Ընդհանուր ժողովի իրաւասութիւններն են.
ա. Թննել եւ վճռահատել միութեան վարչութեան կամ Թննիչ մարմնի կողմից ներկայացւած արտակարգ խնդիրները:

բ. Թննել եւ հաստատել միութեան ծրագիր-կանոնագրի վերաբերեալ եղած առազարկները:

գ. Թննել եւ վճռահատել միութեան անշարժ գոյքերի վաճառման կամ նոր անշարժ գոյքեր գնելու առազարկները:

դ. Թննել եւ վճռահատել հաստատած եւ վաւերացւած նախահաշի ելքերի գումարի 10%-ից աւելի փոխառութիւնների առազարկները:

ե. Թննել եւ վճռահատել միութեան միգոյով կազմակերպւած կամ նրա հոգասարութեան յանձնւած հանրօգուտ հաստատութիւնների գործունեութեան, դադարեցման կամ շեւափոխման խնդիրները:

Յօդւած 16.

Արտակարգ Ընդհանուր ժողովները վաւերական են համարուում միութեան փեարկու անդամների պարզ մեծամասնութեան ներկայութեամբ: Առազին հաւաքին վերոյիշեալ մեծամասնութիւնը չգոյանալու դեպքում, մէկ շաբաթ յետոյ վերստին հրաւիրուում է նոյն ժողովը, որը վաւերական կը համարուի փեարկու անդամների

առևազն մեկ հիևգերորդի ներկայութեամբ: Այդ քննումը չգոյանալու դեպքում, վարչութիւնը հարցի քննարկումը ներառում է Տարեկան Ընդհանուր ժողովի օրակարգի մեզ, դրա քննարկման ժամանակ նկատի առնելով 17-րդ յօդուածի սրամարդութիւնները:

Յօդուած 17.

Արտակարգ Ընդհանուր ժողովների բոլոր որոշումները վաւերական կը համարւեն քննարկու ներկաների չայնների երկու երրորդի մեծամասնութեամբ:

Յօդուած 18.

Միութեան լուծարքի որոշումը քննութեան եւ վճռահասման նիւթ կարող է դառնալ այդ նպատակով հրաւիրուած յատուկ Արտակարգ Ընդհանուր ժողովում, որը վաւերական կը համարուի միութեան անդամների երկու երրորդի ներկայութեամբ, եւ լուծարքի որոշումը կը սրի ներկաների չորս հիևգերորդի մեծամասնութեան որոշմամբ:

Գլուխ Գ

Ընդհանուր կանոններ Ընդհանուր ժողովների համար

Յօդուած 19.

Սոյն կանոնագրութեամբ նախատեսուած մարմինները, այն է՝ միութեան վարչութիւնը կամ Զննիչ մարմինը, Տարեկան կամ Արտակարգ Ընդհանուր ժողովների հրաւիրման որոշում կայայնելու դեպքում, պարտաւոր են ժողովի գումարման թակակը, վայրը, ժամը եւ

օրակարգը, միութեան, անդամների համար ուղարկած շրջաքերականի միզոյով սերտկայնելուն պուզընթայ, ի պահանգել հարկին ժողովի հրաւերը հրասարակել նաեւ սերիս հայ մամուլի մէջ կանոնադրութեամբ նախատեսուած ժամկէտի սահմանում:

Յօդուած 20.

Միութեան Տարեկան եւ Արտակարգ Ընդհանուր ժողովների աշխատանքները ղեկավարում են նոյն ժողովների կողմից ընտրուած դիւանների միզոյով: Դիւանները կազմում են մէկ նախագահից, մէկ փոխնախագահից եւ երկու քարտուղարներից:

Յօդուած 21.

Տարեկան եւ Արտակարգ Ընդհանուր ժողովների մէջ, դիւանի ընտրութիւնից անմիջապէս յետոյ, ժողովը ֆնտում, հարկ եղած դէպքում փոփոխում եւ հաստատում է վարչութեան կողմից ժողովի համար կազմուած օրակարգի նախագիծը:

Յօդուած 22.

Տարեկան Ընդհանուր ժողովների փեարկութեան կարող են մասնակցել այն անդամները, որոնք լրացած կը լինեն առնուազն վեց ամսայ անդամակցութեան շրջանը:

Յօդուած 23.

Միութեան Ընդհանուր ժողովներին մասնակցող անդամների իրաւասութեան ստուգումը կատարում է

վարչութեան կողմից նախֆան ժողովի պաշտօնականապետումը:

Յօդուած 24.

Մինչեւ նոր վարչութեան եւ Քննիչ մարմնի ընտրութիւնը եւ պարտականութիւնների ստանձնումը, շրջանաւարտ վարչութիւնն ու Քննիչ մարմինը շարունակում են իրենց աշխատանքները եւ պատասխանատու են մնում իրենց գործունեութեան համար:

Յօդուած 25.

Տարեկան եւ Արտակարգ Ընդհանուր ժողովները յատուկ աշխատանքների համար կարող են ժամանակաւոր յանձնախմբեր կեանքի կոչել:

Ծանօթ.ա. Տարեկան եւ Արտակարգ Ընդհանուր ժողովների կողմից ընտրուած յանձնախմբերի նիստերը վաւերական կը համարեն երբ անդամների պարզ մեծամասնութիւնը ներկայ կը լինի ժողովին:

Յօդուած 26.

Տարեկան Ընդհանուր ժողովների նիստերի արձանագրութիւնները հաստատելու համար, դիւանը, գործող կամ նորընտիր վարչութեան եւ քննիչ մարմնի անդամների հետ միասին նիստ գումարելով, որին կարող են մասնակցել պակասագումար ժողովականներից, յանուն պատկան Ընդհանուր ժողովի, վաւերացնում է նիստի կամ նիստերի արձանագրութիւնը:

Ծանօթ ա. Արսակարգ Ընդհանուր ժողովների արչանագրութիւնների վաւերացման կարգը որոշում է ինքը՝ ժողովը:

Յօդուած 27.

Միութեան վարչութիւնը կամ Քննիչ մարմինը կարող են սարեական Ընդհանուր ժողով հրաւիրել արտահերթ կարգով, երբ գումարման համար սոյն կանոնագրութեամբ նախատեսուած պայմանաժամից առագ, հետեւեալ դէպքերում.

ա. Վարչութեան հրաժարման կամ իր կազմի անդամների մեծամասնութիւնը կորցնելու պարագային:

բ. Քննիչ մարմնի հրաժարման կամ երբ կազմի անդամների մեծամասնութիւնը կորցնելու պարագային:

Յօդուած 28.

Միութեան Ընդհանուր ժողովներում իւրաքանչիւր անդամ ունի մէկ քիտ իրաւունք: Քիտ իրաւունքը փոխանցելի չէ: Ձեռնպահ քիտերը ընդհանուր թի մեզ չեն մնում:

Յօդուած 29.

Վարչութեան եւ Քննիչ մարմնի ընտրութիւնի ստագ, ժողովն ընտրում է փէնտրի ստագիչ մարմին, որի ընտրութիւնը կասարում է քայ փտարկութեամք, եւ յագորդաքար առաւելագոյն շայն սսայած հիւնգ թնկնածուները կազմում են փէնտրի ստագիչ մարմինը, որը ժողովականների ներկայութեամք դիւանի հես միասնաքար, կասարում է փէնտրի ընթերցումը, ստագումը եւ հաշարկումը: Քննտրի հաշարկումիւ յնտոյ, դիւանը սնղի վրայ կազմում է ընտրութիւնների արդիւնքի արշանագրութիւնը, որը եւ հասսասում է իր կազմի եւ փէնտրի ստագիչ մարմնի անղամների ստրագրութեամք:

Ծանօթ. ա. Ընտրութիւնների աւարտիւ միւնչեւ երեք օր, ընտրութիւնների օրինականութեան դէմ քողոք ունեցող անղամները կարող են իրենց գրաւոր քողոքը՝ ներկայայնել ժողովի դիւանին միութեան գրասննեակի միգոցով: Դիւանը սսայած քողոքները փնութեան ենթարկելով, ընտրութիւնների ընթայքի մէգ օրինական վանցառութիւններ գննելու դէպքում, ընտրութիւնների արդիւնքը կառկախի, ընղհանուր ժողովը նորիւ նիստի կը հրաւիրի եւ հարցի փնութիւնը կը յանչնի նրա սնօրինութեան, որը յնս փնութեան իրաւասու է ընտրութիւնները քեկանելու կամ հասսասելու: Դիւանը վերը մասնանչւած

ժամկետում, ընտրությունների օրինականությունը կասկածանքի սակ դնող բողոքներ չստանալու կամ ստացված բողոքները այդպիսին չենկասելու դեպքում, կը հաստատվի կասարևած ընտրությունները:

Յօդուած 30.

Միությունս Ընդհանուր ժողովներում ներկայայուած առազարկները ներկորդուելու պարազային, քետրկությունս են դրում իրենս ստայման հերթականությամք: Քետրկությունը կասարում է նախ թեր, ապա դեմ եւ վերզում շենկպահ շայների հաշարկելու կարզով:

Օանօթ ա. Քետրկությունս պարազային, երք շենկպահների թիւը ժողովին մասնակցող միությունսկանների կեսիս անելին լինի, նշանակում է ինդիրը պարզաքանուած չէ, որով հարզը կրկին պիտի դրի քննարկման, որպետսի գոյանայ թեր ու դեմ քետրկողների գումար մեծամասնությունը՝ շենկպահների նկասմամք:

Յօդուած 31.

Միությունս Ընդհանուր ժողովների աշխասանքներին դադար սրելու դեպքում, յենսգայ ժողովները նիստի քնոյթ են ստանում: Քւորում չունենալու պասճառով յենսշզուած հաւաքները նիստ չեն համարում:

Յօդուած 32.

Ընդհանուր ժողովների դիւանները, ժողովների կողմից ընտրուած մարմիններին եւ յանչնախմբերին ժողովի պիտի հրաւիրեն Ընդհանուր ժողովի փակման թւականից ամենաուշը մինչեւ մէկ շաբաթ:

Յօդուած 33.

Միութեան վարչութեան եւ Քննիչ մարմնի ընտրութիւնները կատարուում են փակ փէարկութեամբ: Ձայների հաւասարութիւն առազանալու դէպքում, հաւասար փէ ստացած վերջին թեկնածուների հարցը վճռահասուում է վիճակահանութեամբ:

Գլուխ Դ Վարչութիւն

Յօդուած 34.

Միութեան գործերը վարելու եւ աշխատանքները կազմակերպելու համար, Ընդհանուր ժողովը երկու տարին մէկ անգամ ընտրում է եօթ կամ ինն հոգույ թաղկայած մի կազմ, որ կոչուում է Հայ Համալսարանականների Ընդհանուր Միութեան Վարչութիւն: Վարչութեան անդամակցութեան թեկնածուների ընտրացանկի մէջ առաւելագոյն փէ ստացած եօթ կամ ինն միութենականները համարուում են վարչութեան անդամ, իսկ նրանց անմիզապէս յագորդող առաւելագոյն փէ ստացած երեք միութենականները համարուում են վարչութեան անչնափոխանորդները:

Ծանօթ ա. Վարչութեան անդամ կարող են ընտրուել միութեան այն անդամները, որոնք առևուշակ են երեք տարի անդամակցած կը լինեն, միութեանը:

բ. Վարչութեան անդամ կարելի է ընտրուել երկու յազորդական նստաշրջանների համար: Մէկ նստաշրջանի դադարից յետոյ արգելք չկայ վեր ընտրութեան համար:

Յօդուած 35.

Վարչութիւնը, Ընդհանուր ժողովի դիւանի հրաւերով եւ ներկայութեամբ գումարած իր առազին նիստում, իր անդամների միջից ընտրում է դիւան՝ բաղկացած մէկ նախագահից, մէկ փոխնախագահից, մէկ քարտուղարից եւ մէկ գանչապահից:

Ծանօթ ա. Ընդհանուր ժողովի դիւանը, իր աշխատանքը աւարտած համարելուց առաջ, մի շրջաբերականով միութեանականներին տեղեկացնում է ընտրութիւնների արդիւնքի մասին:

բ. Վարչութեան նախագահի քաջակցութեան դէպքում, նրա պարտականութիւնը ստանձնում է փոխնախագահը:

գ. Վարչութիւնը պէտք է կանոնաւոր ձեւով կազմի եւ պահի իր նիստերի արձանագրութիւնը:

Յօդուած 36.

Վարչութեան որոշումները վաւերական են համարուում երբ կայանում են անդամների պարզ մեծամասնութեամբ գումարած նիստերում եւ չայնտի պարզ մեծամասնութեամբ, ի քայ առեալ կանոնագրով նախատեսուած կէտերի:

Յօդուած 37.

Վարչութեան այն անդամը որ առանց յարգելի պատշառով կը քայակայի վարչութեան նիստերից՝ չորս հերթական նիստ շարունակաբար, կամ երեք ամիսների ընթացքում գումարած նիստերի ընդհանուր թւի երկու երրորդից՝ պարբերաբար, պարագան փաստելուց յետոյ, ինքնաբերաբար հրաժարուած կը համարուի վարչութեան անդամակցութիւնը: Յարգելի պատշառով վարչութեան անդամը առաւելագոյնը 4 ամսով կարող է քայակայել վարչութեան նիստերից: Հրաժարուած անդամի փոխարէն վարչութիւնը համագործակցութեան կը հրաւիրի հերթական անձնափոխանորդին՝ մէկ ամսուայ ընթացքում:

Ծանօթ ա. Վարչութիւնը իր գործունեութեան ժամանակաշրջանի վերջին վեցամսեակի ընթացքում, անձնափոխանորդներին իր կազմի մէջ ներառելուց յետոյ, դարձեալ քայեր ունենալու դէպքում, կարող է շարունակել իր աշխատանքը, պայմանով որ իր կազմի մէջ մնայած անդամների թիւը 5-ից պակաս չլինի:

Յօդուած 38.

Վարչութիւնն իր աշխատանքների մեզ պարտաւոր է առազնորդել միութեան ծրագրի եւ կանոնագրի տրամադրութիւններով եւ Ընդհանուր ժողովների որոշումներով:

Յօդուած 39.

Վարչութիւնը միութեան բարձրագոյն գործադիր մարմինն է եւ որպէս այդպիսին, ենթակայ լինելով նախորդ յօդուածներով նշուած պարտականութիւններին, վայելում է նաեւ սոյն կանոնագրութեամբ նախատեսուած բոլոր իրաւունքները: Այնուամենայնիւ, վարչութեան իրաւասութեան սահմանների մեզ են մտնում նաեւ, մասնաւորաբար, հետեւեալ հարկերը եւ աշխատանքները.

ա- Հսկել միութեան ծրագիր-կանոնագրի չճշգրիտ գործադրութեանը:

բ- Քննել եւ հաստատել միութեան անդամակցութեան դիմումագրերը:

գ- Համարել միութեան արքեր բաժանմունքների աշխատանքների եւ չեղարկների ծրագրերը եւ նրանց գործադրման միջոցառումների նախագծերը եւ նախահաշիւները:

դ- Կատարել միութեան արտաքին բոլոր գրագրութիւնները, հրաւերները, յայտարարութիւնները եւ ծանուկումները:

ե- Ներկայացնել միութիւնը օրէնքի եւ այլ հաստատութիւնների առաջ:

զ- Բայել ամեն կարգի քանկային հաշիւները նթայիկ, ինայոդական, աւանդային-միութեան անուով, վարչութեան երեք անդամների ստորագրութեամբ, եւ օգտագործել քայլած հաշիւները:

է- Կապմակերպել յանչնախմբեր միութեան ներքին կամ արտաքին աշխատանքների եւ շտեմարկների համար եւ հսկել նրանց գործունեութեան վրայ:

ը- Ցույակագրել միութեան շարժական եւ անշարժ ունեւածքը եւ հոգալ նրանց պահպանման համար:

թ- Վարչութիւնը իր տարեկան նիւթական գործունեութեանց վեկույագրերը, տարեկան Ընդհանուր ժողովի գումարման թւականից մէկ շաբաթ առաջ կը տեղեկացնի միութեան անդամներին իր կողմից յարմար նկատւած միջոցով:

Գլուխ Ե. Զննիչ Մարմին

Յօդւած 40.

Ընդհանուր ժողովների կողմից հաստատւած որոշումների, նախահաշի եւ վարչութեան նիւթական գործունեութեան վերահսկողութիւնը իրականացում է Զննիչ մարմնի միջոցով, որոնց գործադրման մէջ թերացումներ նկատուլու դէպքում գրաւոր կերպով վարչութեանն է յանչնում իր ունեւած դիտողութիւնները:

Յօդւած 41.

Քննիչ մարմինը բաղկացած է երեք հոգուց, ընտրուում է Ընդհանուր ժողովի կողմից փնէրի համեմատական մեծամասնութեամբ, եւ մէկ տարւայ ժամանակամիջոցի համար: Յազորդական փէ ստացած թէկնածուն համարուում է նոյն մարմնի անչնափոխանորդ:

Յօդւած 42.

Քննիչ մարմինը հրաւիրուում է վարչութեան բոլոր նիստերին, խորհրդակցական չայնի իրաւունքով:

Յօդւած 43.

Վարչութիւնը պարտաւոր է ամէն երեք ամիսը մէկ, իր հաշւեմատեանները եւ նիւթական գործառնութեան հաշւեկշիորը հաշւապահական վաւերագրերի հէտ միասին գնել Քննիչ մարմնի տրամադրութեան տակ, հաշւական փնութեան համար:

Յօդւած 44.

Վարչութիւնը Ընդհանուր ժողովի գումարման համար նախատեսւած թականնից առնուալն մէկ ամիս առազ, պարտաւոր է նիւթական գործառնութեան վերաբերող վեկույագրերը՝ հաշւեկշիորը, ելլի եւ մուտքի հաշւեյոյցը, նիւթական գոյավիճակի մէզ առազացած փոփոխութեան պատկերը, իր հաշւեմատեանների եւ վաւերագրերի համապատասխան փաստաթղթերի հէտ գնել Քննիչ մարմնի տրամադրութեան տակ, փնութեան եւ սնուզման համար:

Յօդուած 45.

Քննիչ մարմինը պարտաւոր է Ընդհանուր ժողովին ներկայայցել իր կատարած սուբուզումների վեկուլագիրը:

Յօդուած 46.

Վարչութեան անդամը չի կարող ընտրել Քննիչ Մարմնի անդամ, ինչպէս նաեւ չի կարող ընտրել որպէս նոյն մարմնի անշնափոխանորդ:

Յօդուած 47.

Քննիչ մարմնի անդամների ընտրութիւնը ենթակայ է վարչութեան անդամների համար նախատեսւած պայմաններին:

Գլուխ Զ Յանշնախմբեր եւ քաժանմունքներ

Յօդուած 48.

Վարչութիւնը, միութեանական եւ հանրային յատուկ կարիքներին գոհացում տալու աշխատանքները կազմակերպելու համար, կարող է գոյակոչել առժամեայ կամ մնայուն յանշնախմբեր: Յանշնախմբերի անդամները նշանակուած են վարչութեան կողմից երկու տարւայ ժամանակաշրջանի համար:

Յօդուած 49.

Բաժանմունքները միութեան մասնագիտական աշխատանքների միաւորներն են: Դրանք կազմուած են նրա կամ նրա կառոյցի մաս կազմող միաւորների

անդամների ինֆուպարգայումին վարկ սալու եւ նրանց հաւաքական, միութենական եւ հանրային կարիքներին գոհացում սալու ծրագրաւորումները եւ աշխատանքները կազմակերպելու եւ հունաւորելու համար:

Յօդւած 50.

Միութեան յանձնախմբերի եւ բաժանմունքների կազմութեան, աշխատանքների ծրագրաւորման, նրանց նախահաշիւների մանրամասնութիւնների եւ վարիչ մարմինների լիազօրութիւնների եւ պարտականութիւնների վարչական կանոնները մշակում եւ գործադրութեան է դնում վարչութիւնը:

Յօդւած 51.

Միութեան մէկ գոյակոչւած եւ աշխատող յանձնախմբերի եւ բաժանմունքների աշխատանքները կազմակերպելու եւ համադրելու համար, վարչութիւնը կարող է կազմել յանձնախմբերի վարիչ մարմին եւ բաժանմունքների համադրող մարմին:

Ծանօթ ա. Յանձնախմբերի եւ բաժանմունքների վարիչ մարմինները կազմում են հետեւեալ շեւով`

- վարչութեան մէկ ներկայացուցիչը, որը նշանակում է վարչութեան կողմից կապի հանգամանքով:

- Յանձնախմբերի եւ բաժանմունքների ղիւանների նախագահները:

- Վերոյիշեալ վարիչ մարմինների անդամներն իրենց միզից ընտրում են մէկ նախագահ, մէկ ֆարսուղար, եւ ի պահանգել հարկին, մէկ գանձապահ:

Ծանօթ ք. Յանչնախմբերի վարիչ մարմինները եւ քաժանմունքների համադրող մարմինները կանոնաւոր կերպով կազմում են իրենց նիստերի արշանագրութիւնը եւ յղում վարչութեանը:

Մասն չորրորդ - ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

Յօդւած 52.

Հակա-կարգապահական արարքներ են համարուում.

1- Միութեան ծրագիր-կանոնագրի ոգուն եւ կանոններին քայայայտօրէն դէմ ելող աշխատանքներ կազմակերպելը, եւ այդ աշխատանքների համար խմբակցութիւններ կազմելը եւ բռնամիզոյներ դիմելը:

2- Միութեան վարչութեան, յանչնախմբերի կամ քաժանմունքների գործունեութեան դէմ խափանարար աշխատանքներ տանելը:

3- Միութեան կենտրոնատեղիից օգտւելու կանոններին չենթարկելը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Յօդված 53.

Վերը մասնանշված հակակարգապահական արարքների համար, վարչությունը նախ քանաւոր ապդարարութիւն է անում ենթակային. նոյն ընթացի կրկնութեան դէպքում վարչությունը կարող է գրաւոր ապդարարութիւն անել պակասողին:

Յօդված 54.

Վարչությունը պակասող անդամին կարող է միութեան անդամակցութիւնի կախակայել 3 ամսից մինչեւ մէկ տարի:

Յօդված 55.

Ծանրակշիռ պարագաներում, վարչությունը կարող է հակակարգապահական ընթացի մէջ գտնող որեւէ անդամի նկատմամբ, յետ փնտրութեան, միութիւնից հեռացնելու որոշում կայացնել:

Յօդված 56.

Ենթակայի հեռացման որոշման վերափնտրութիւն պահանգելու դէպքում, վարչությունը պարտաւոր է վերափնտրութեան պահանգագիրը ստանալու թւականից մինչեւ մէկ ամիս միութեան երէց անդամներից կազմել 5-7 հոգանոց դատական մի յանձնախումբ՝ ներկայացւած թողոքը վերափնտրելու եւ վճռահատելու համար:

Ծանօթ ա. Վերաֆնութիւն պահանգող անդամը կը պրկի իր բողոքը հետապնդելու իրաւունքից եթէ որոշումը գրաւոր կերպով իրեն սեղեկապետուց մինչեւ մէկ ամիս պատշաճաբանած բողոքագիր չընտրկայայնի վարչութեանը եւ ընթացք չսայ դատական յանձնախմբի նիստերին ներկայանալու իրաւերին:

Յօդւած 57.

Վարչութեան կողմից տրւած հեռապման որոշումը, Դատական յանձնախմբի կողմից եւս հաստատուող դէպքում, ենթակայ կարող է մի վերգին անգամ իր բողոքը գրաւոր ներկայայնել միութեան Տարեկան Ընդհանուր ժողովին, որը հարցի ընթացքի մէջ օրինական թերութիւններ նկատելու դէպքում, հարցը վերաֆնութեան կենթարկի՝ կամ սեղի վրայ, կամ իր կողմից ընտրւած Վերաֆնիչ յանձնախմբի միգուցով: Վերաֆնիչ յանձնախմբի որոշումը վերգնական կը համարուի:

Յօդւած 58.

Պատժական որեւէ որոշում պիտի տրուի, կամ կայայտուած որոշումը պիտի բեկանուի վարչութեան անդամների երկու երրորդի քեով:

Մասն Հինգերորդ - ՏՆՏԵՍԱԿԱՆ

Յօդած 59.

Միութիւնն ունի մի ընդհանուր գանձարկը, որտեղ կենսրոնացոււմ են միութեան բոլոր եկամուսները, վարչութեան հսկողութեան ներքոյ:

Ծանօթ ա. Այն ֆոնդերը, որոնք երկար ժամանակ չեն օգտագործուի իրենց նշանակի համար, վարչութեան առաջարկով եւ Ընդհանուր ժողովի վաւերացումով կը մուծեն միութեան գանձարկը:

Յօդած 60.

Միութեան եկամուսները գոյացոււմ են.

- 1- Անդամավճարներից
- 2- Նւիրասուութիւններից
- 3- Ձեռնարկներից գոյացած հասոյթից

Յօդած 61.

Վարչութիւնը որոշում է թէ՛ իր գանձապահի, եւ թէ՛ բաժանմունքների եւ յանձնախմբերի դիւանների մօտ ընթացիկ ծախսերի համար պահուելի կանխիկ գումարները:

Ծանօթ ա. Յատուկ ձեռնարկների կազմակերպման համար վճարուած առհաշի գումարների հաշուեփակը պիտի կատարուի ձեռնարկի աւարտի թակասից մինչեւ մէկ ամիս:

Յօդված 62.

Միութեան կիսական բոլոր գործառութիւնները պէ՛տ է հիմնաւորւեն փաստական սւեալներով եւ գրաւոր երաշխիքներով:

Յօդված 63.

Միութեան բոլոր ծախսերի դիմաց սրում կամ ստացում է պաշտօնական անդորրագիր, գանձապահի եւ նախագահի կամ փոխնախագահի ստորագրութեամբ, հաստատւած միութեան կնիքով: Տրւած ու ստացւած անդորրագրերի եւ ստացականների պատճենները պիտի կցւեն հաշւեգրին:

Յօդված 64.

Միութեան բոլոր մուտքերի դիմաց սրում է համապատասխան անդորրագիր:

Յօդված 65.

Վռանց հաշւեգրի եղած ծախսերի դիմաց պիտի կազմւեն համապատասխան փաստաթղթեր, որոնք կրելով ծախսարարի եւ վարչութեան գանձապահի եւ նախագահի, կամ փոխնախագահի, ստորագրութիւնները, կցւելու են հաշւապահական վաւերագրին:

Յօդված 66.

Միութեան ելեւմտական տարին սկսւում է իւրաքանչիւր տարւայ օգոստոսի 1-ից եւ աւարտւում յազորդ տարւայ յունիսի 31-ին:

Ծանօթ ա. Վարչութեան կողմից հաշվեկշռի հաստատումից յետոյ մինչեւ Ընդհանուր ժողովի գումարումը, շրգանաւարտ վարչութիւնը կարող է վճարումներ կատարել միայն ընթացիկ եւ անհրաժեշտ ծախսերի հաշիւն:

Յօդուած 67.

Վարչութիւնը իւրաքանչիւր ելեւմտական սարեվերգին պիտի կատարի միութեան եւ քաժանմունքների հաշիւփակը, որը եւ պիտի ներկայացուի Թննիչ մարմնին:

Յօդուած 68.

Պատահական յաւելեալ եկամուսներից կարելի է օգտուել շահագրհական այնպիսի նպատակների համար, որոնք վստահի չեն ենթարկում ներդրում դրամագլուխը: Այդ օրինակ եկամուսների միայն 50%-ը կարելի է օգտագործել շահագրհական ձեռնարկների համար, պայմանով որ ներդրուող դրամագլխի ընդհանուր գումարը չանցի միութեան երկամեայ նախահաշի մուսների ընդհանուր գումարից:

Յօդուած 69.

Միութեան սարեկան Ընդհանուր ժողովի կողմից հաստատուած նախահաշի գործարդութեան ընթացքում չնախատեսուած եկամուսների միայն 40%-ը կարելի է օգտագործել երկամեայ նիւթական գործառնութեան շրգանում:

Մասն Վեցերորդ - ԼՈՒԾԱՐՔ

Յօդած 70.

Միութիւնը լուծարի կարելի է ենթարկել սոյն կանոնագրի 15-րդ յօդածի սրամադրութիւնների համաձայն: Լուծարի պարագային միութեան շարժական և անշարժ ունեւածիքը ամբողջութեամբ յանձնուում է Հայաստանայ Կոաֆելական եկեղեցուն:

Մասն Եօթերորդ - ՅԱԲԵԼԿԾ

Սոյն ծրագիր-կանոնագիրը բաղկայած է 7 մասի, 70 յօդածներից և 23 ծանօթագրութիւններից, վաւերացած է յունւարի 14, 1944-ին կայացած հիմնադիր և առազին Պատգամաւորական ժողովի 3-րդ նիստում, վերամշակման է ենթարկել բազմիցս անգամներ պանապան Արսակարգ և Ընդհանուր ժողովների կողմից, վերգիւր՝ հոկտ. 31, 1986-ին գումարւած Արսահերթ Ընդհանուր ժողովում: Իր ներկայ չեւով հաստատել է յունիսի 2, 1995-ին գումարւած Արսակարգ Ընդհանուր ժողովի կողմից, և գործարքութեան է դրուում 1995-ի սեպտեմբերի 1-ից: